<<Մասիս>> համատիրություն

Համատիրությունը

1. Համատիրությունը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով ստեղծված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ է, որը հիմնադրվում է բազմաբնակարան շենքի կամ շենքերի բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով:

2. Համատիրությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3. Համատիրությունը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

4. Համատիրությունն իրավունք ունի սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ:

(3-րդ հոդվածը փոփ. 13.04.11 ՀՕ-109-Ն, 19.03.12 ՀՕ-80-Ն)

(3-րդ հոդվածը 24.10.20 ՀՕ-10-Ն օրենքի 1-ին հոդվածի փոփոխությամբ ուժի մեջ է 01.04.2020 թվականից:)

Համատիրության գործունեության նպատակները

Համատիրության գործունեության հիմնական նպատակներն են՝

ա) օրենքով սահմանված կարգով իրականացնել բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարումը.

բ) օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնել և պաշտպանել շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր շահերը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական և այլ իրավասու մարմիններում.

գ) իրականացնել այլ խնդիրներ, այդ թվում՝ կոմունալ ծառայություններ մատուցողների հետ շենքի կառավարման մարմնի կողմից կնքել պայմանագրեր, որոնք չեն հակասում սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Համատիրությունների մասին օրենսդրությունը

1. Համատիրությունների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա գործում են միջազգային պայմանագրերի նորմերը: